


401. 475 - 9

ՅԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՐԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ


## ԶԵՐՆԱԾԿ

„ԲԱՆՎՈՐ“ ԱՅՐԵԵՆԱՐԱՆԻ  
ՊԱՐԱՊՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մ. ԴԱՒՐԳ-ՇՅԱՆ



Պետական Հրատարակություն, — Երևան, 1930




ԹԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՎԵ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ


## ԶԵՐՆԱՐԿ

ԲԱՆՎՈՐ՝ ԱՅԲԲԵՆԱՐԱՆՈՎ  
ՊԱՐԱՊՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

A 7055 / 8001

Մ. ԴԱՒՐԴԱՐՅԱՆ





Հ. թ. № 1175:

Գրառելով թ. № 3001 (բ.)

Տիրած 3000.

Գետներատի առաջին տողարան Վաղարշապատ:

Գառվել թ. № 205:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ «ԲԱՆՎՈՐ» ԱՅԲԲԵՆԱՐԱՆՈՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

«Բանվոր» ալբրենարանը կազմված է ամբողջ բառերի ու վանկերի՝ վերլուծական համադրական մեթոդով՝ հնչյունալին մշակմամբ:

Ալբրենարանը գործադրվելու յերգագում, քաղաքացիում գալիք վայրերում, արդյունաբերական ձեռնարկներում և այլն, մի խոսքով՝ այնպիսի վայրերում, զորակադրությունները գտնվում են արդյունաբերական աշխատանքալին կամ հիմնարկալին միջավայրում (որինակ՝ պրոֆմիությունները, քաղաքում աշխատող տնայնագործները, մշակները և այլն): Քաղաքի շըրջապատում գտնվող կարմիր-բանակալինները նույնպես կարող են ոգտվել այս գրքից, հատուկ ալբրենարանի բացակայության դեպքում:

Գրադիտության ուսուցումը (ալբրենական մասը) բովանդակում է ալֆմելական արտադրական-կենցաղալին նյութեր, վօրոնց հետ զուգորդվում են նաև քաղաքական խնդիրներ. վերջիններս հետզհետե ընդարձակվում են՝ հաշվի առնելով սովորողների փորձի ու ձեռք բերած ունտելիությունների աճումը:

Հնթերցարանի նյութերը խացրած են հետեւալ գրաֆիններում, համապատասխան թեմաների տակ.

1. Նոր կյանք կառացենք, —վորտեղ ալֆմելական-

կենցաղալին հարցերի շուրջը շոշափվում և նաև անցալ կենցաղը և նրա մնացորդները՝ սնահավատությունները, տգիտությունը, կնոջ իրավագուրի վիճակը, կրոնամոլությունը և այլն:

2. Բարձրացնենք մեր արդյունաբերությունը, — վոր շոշափում և քաղաքի արդյունաբերական կյանքը և նրա հետ կապված խնդիրները՝ ինքը ինպուսարացումը, սոցիալիստական մրցումը, մեր հնգամյա պլանի առանձին հարցերը, բանվորի կյանքն ու աշխատանքը, գալիք կոմունիստական հասարակակարգը և այլն, այս և հետագա բաժնում շոշափվում են նաև զյուղի և քաղաքի կապը, անտեսական-կուլտուրական զոգումը:

3. Բարձրացնենք մեր զյուղատեսեաուրիյունը, — այսուղ հիմնական խնդիրներն են՝ նոր, խորհրդավին զյուղն իր աճող տնտեսությամբ և կուլտուրական վերելքով. գյուղի կոլեկտիվացումն ու կոոպերացումը պետք և այս բաժնի հիմնական խնդիրները գառնան:

4. Ամրացնենք ու ծավալինք Հոկտեմբերի նվաճումները, — այս բաժնի թեմաներն են՝ ամրացնել բանվոր դաստիարակի (գյուղացիական մասսաների առաջնորդի), Խորհուրդների իշխանությունը, ամրացնել Խորհուրդների Միությունը — ամբողջ աշխարհի աշխատավորության նեցուկը. այս բաժնում տեղ ե տրված բանվորության միջազգալին պալքարին, քաղաքացիական կորինքներին և հեղափոխության առաջնորդներին:

Կարգալու ուսուցման տեխնիկան սովորողներին տալու լե հետեւալ ունակությունները.

Բառի մօակում — խոսքի (ասուլթի) կարդալը, բառերի վերլուծելը, ծանոթություն սրանց գծագրման, արտասանության, տեղափոխության և կարդալուն:

Վանիի մօակում—բառի վերլուծումը վանկերի, ծառնոթությունն վանկերի գծագրման, վանկերից նոր բառեր ու խոսքեր կազմելը:

Հնչյունի մօակում—ծառնոթ բառերից ու վանկերից հնչյունատառ հանելը: Հանած տառերից կազմված նոր վանկերի կարդալը, այդ վանկերից նոր բառեր ու խոսք կազմելը:

Այլբենական նյութի (տեքստի) կարդալը դուզընթաց և լինելու այս բոլոր ետապներին:

Այլբենական նյութի մշակման զուգընթաց՝ ծառնոթ հնչյունատառերի միջոցով՝ պլակատների, ցուցանակների, հայտաբարությունների, լրագրի ու գրքի վերնատգրերի կարդալը:

Գրելու ուսուցման տեխնիկան տալու լեռ հետեւալ ու նակությունները.

Մշակած բառերի ու խոսքի արտագծումը.

Գիտակից արտագրուրյուն ձեռագրից.

Գիտակից արտագրուրյուն տպագրից.

Գրուրյուն նիւղուրյամբ.

Տրված հարցերին համառոտ գրավար պատասխան ներ.

Կազմել գույքի, դրքերի, սովորողների և այլ ցուցակներ.

Կազմել կարճ գիմումներ, նամակ, թղթակցուրյուն և այլն:

Ուղղագրական ունակություններից տալ հետեւալը.

Մեծատառի գործածուրյունը հատուկ անվան մեջ, խոսքի սկզբում և վերջակետից հետո.

Տողադրձի դեպքերի ծանոթություն.

Երկարացների գրություն.

Անօտակրություն (վերջակետ, միջակետ, սառըակետ,  
դիմ):

Մաթեմատիկական ունակությունները արվում են  
գրադիմառթյան դպրոցի ծրագրում, վորով և պետք ե  
առաջնորդվիլ, սակայն կատելով գրադիմառթյան նյու-  
թի հետ:

Այս ունակությունները զբուրությամբ լուրացնելու  
և խմաստավորելու համար տնհրաժեշտ և ողտագործել  
այրբենարանի համատարատասխան նյութերը, վորոնք  
մոտ են ու հետաքրքրական սովորողներին. Պարզա-  
բանող և ներածական զրուցները չպետք ե շատ ըն-  
դարձակել, այլ պետք ե խիստ կերպով սահմանափա-  
կել այն նյութով, վոր առաջադրվում և սովորողներին՝  
կարգալու, գրելու և հաշվելու համար. Որինակ՝ սովորի  
լոգունզը (եջ 4) մշակելիս պետք ե բավականանալ  
լենինի մասին նախորդ զրուցում տվածով, ավելաց-  
նել միայն այն, վոր լենինը մեծ կարեորություն եր  
տալիս զրել կարգալուն (սովորելուն) և հիշել նրա  
ասածն այդ մասին (սովորին):

Ընթացիկ նյութը պարզաբանելու համար բացի  
ներածական զրուցից կարելի չե ողտագործել նաև.

Տեքստին զուգընթաց զրուցները.

Դեղաբարվետական նյութի կարդալը (այլ աղբյուր-  
ներից).

Իլուսաբատիվ նյութ (նկարներ, առարկաների  
ցուցադրություն և այլն):

Ինչպես սկզբում ասվեց, գրադիմությունն անցնում  
ենք վճրվածական-համադրական մեթոդով, վոր պետք  
ե աստիճանաբար գործադրել—սկզբում բառերի, ապա  
վանկերի սահմանում. հնչյունալին մշակումը պետք ե  
սկսել ավելի ուշ:

Գրագիտության առաջին մոմենտն ե—խոսքի կարդալը, նրա վերլուծումը բառերի և բառերի համադրումը.

Յերկրորդ մոմենտն ե—խոսքի վերլուծումը բառերի, բառերի վերլուծումը վանկերի և այդ վանկերից նոր բառեր, իսկ բառերից խոսք կազմելը (համադրում).

Յերրորդ մոմենտն ե—բառի վերլուծումը վանկերի, վանկերից տար նաևնելը (վերլուծում), իսկ տառերից ծանոթ վանկերի ու բառերի կազմելը (համադրում):

Զպետք և մոռանալ, վոր գրքին զուգընթաց պետք ե ոգտագործել նաև պլակատները, լոգունգները, զրքի ու լրագրի խորագրերը, որացուցը, կոչերն ու հայտարարությունները, վորոնք իրենց առորյա նշանակությամբ մեծ հետաքրքրություն են առաջացնում չափահաս սովորողների մեջ։ Հենց առաջին դասերից սկսած դասատուն կարող ե ոգտագործել այս միջոցները, սովորողներին առաջարկելով գտնել համապատասխան բառեր ու նկարներ, որինակ՝ Լենինի նկարը կամ Լենին բառը որացուցընում կամ պլակատների վրա, բանվոր բառը «Բանվոր» լրագրի վերնագրում, արտել լեկ մեքենա բառերը «Աշխատանք» կամ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում, հանած տառը վորեն լրագրում, դրագում, պլակատի վրա և այլն։

Այբբենական շրջանում, ինչպես նաև ընթերցարանի առաջին տառերի մշակման ընթացքում, մեծ ծառայություն կարող ե ցուց տալ հատվող ալբրենը. դասատուն կարող ե ոգտագործել ինչպես մեծադիր ալբրենը, մի թերթի վրա, պատին փակցնելու համար, այնպես և փոքրադիր ալբրենը, վոր կցվում ե դասագրքին՝ մեկ կամ մի քանի թերթերի վրա։ Մեծադիր

ալբրենի մի քանի (2-3) որինակ կաբառում են և  
տառերը ալբրենական կարգով շարում սեղանի վրա,  
իսկ փոքրադիր ալբրենի տառերը կաբառելով սովո-  
րողները պահում են իրենց մոտ, լուսիու կամ ծխա-  
խոտի տուփերնեւմ, Հատվող ալբրենի տառերից սկզբ-  
նական շրջանում կազմում են խոսքեր կամ տառլիթ-  
ներ, վոր իրենց մեծությամբ ու կանոնավոր ձևերով լավ  
են ապավորվում և գլուրացնում են ալբրենտրանին  
անցնելը (կարգալը):

Հատվող ալբրենից կազմած տառլիթը կամ խոսքը  
գործածվում և ժամավենի (շերտերի) ձևով և մեծ  
չափով հեշտացնում ե բառի ու խոսքի ուսուցումը—  
բառերի տեղափոխություններ կատարելիս, բառերից  
խոսքեր կազմելիս, բառը վանկերի, վանկը հնչունա-  
տառերի վերլուծելիս, ինչպես նաև այս մասերի հա-  
մազրման ժամանակի Դժվարընթեռնելի բառերը  
մշակելու կամ ուղղագրական կանոններ լուսացնելու  
հոմար նույնպես անհրաժեշտ է հատվող ալբրենի գոր-  
ծածությունը: Ալբրենտրան շրջանի վերջում հատվող  
ալբրենից կարելի յե կազմել պլակատներ, աղյուսակ-  
ներ և ալյն:

Գլազիտության ուսուցման կարևոր մոմենտներից  
մեկն ե վանկերի մշակման մեջ հաջորդականության  
պահպանումը: Այդ նպատակով պետք ե վանկերի  
մշակմանը տալ հետևյալ ընթացքը.

1. Պարզ (յերկնչյուն) բաց վանկերի կարդալը.—միե-  
նույն բաղաձայնը վերջանում ե տարբեր ձայնավոր-  
ներով (սո, սա, սու) կամ տարբեր բաղաձայներ կըց-  
վում են հաջորդող միենույն ձայնավորին (սո, վո, րո):  
Սույն վանկերը մտնում են «Բանվորի» առաջին դա-

սերի նյութի մեջ (սովորի, ասա, Սուրեն, ոռվորի, Լեվոնին, Կարո):

2. Պարզ փակ վանկերի կարդալը (աս, դաս, բան, վոր, նին):

3. Բարդ բաց վանկերի կարդալը. յերկու բաղաձայներին հաջորդում ե ձախավորը (վրա, գրի). առաջին տառը փոխելով, մենք ստանում ենք նոր վանկեր (սրա, նրա, դրա, դրի, սրի, և այլն):

4. Բարդ փակ վանկերի կարդալը (արտ, իսկ, մարդ). փոփոխելով ստանում ենք՝ վարդ, մարտ, սարդ և այլն:

5. Նմանահնչյուն ձայներից կտզմված կոշտ և փափուկ զուգորդումներ (կաղ—քաղ, սեր—սեռ և այլն):

Այս վարժությունները ձանձրալի չդարձնելու համար պետք ե ոգտագործել սովորողների ակտիվությունը—տված բառերից նման վանկեր ընտրելու, ծանոթ վանկերից նոր բառեր կազմելու և այլ նման աշխատանքներ հանձնարելով նրանց:

Քրագիտության ուսուցման ընթացքում կարդալու հետ միաժամանակ սկսվում ե նաև զրությունը. առաջին դառերին սովորական գրությանը փոխարինում ե առտագծումը, աշխատելով գծած (նկարած) տառերը նմանեցնել տպագրին: Զեռադրին կարելի լի անցնել այն ժամանակ միայն, յերբ մի քանի տառեր հանել են արդեն և ալդ տառերից հնարավոր ե կազմել իմաստալի խոսք կամ բառեր. «Բանվոր» ալբրենարանում այս աշխատանքն սկսվում է 4-րդ դասից, սակայն դասատուն իր հայեցողությամբ կարող ե հետաձգել 6—8-րդ դասերին, վորպեսզի ստիպված չլինի ձեռագրի հետ միաժամանակ դիմել նաև արտագծման: Արտա-

զծումը սովորողի համար ինքնանպատակ չե, այլ մի միջոց հեշտ կերպով ձեռադրին անցնելու. նա տալիս է անսողական մտապատկերներ, զծազրության միջոցով ամրացնում և այդ մտապատկերները, վարժում և ձեռքի շարժումները և կողմնակի կերպով բավարարում և սովորողի բուռն ցանկությունը՝ ըստ հնարավորության շուտ զբելու նկատմամբ:

Զեռազգին անցնելուց հետո սկսվում և բուն գրությունը, սկզբում պետք և արտագրել ձեռազգի նմուշներից (գրատախտակից կամ գրքից), հետզհետե՛ տառերի ձեր լուրացնելու գեղքում՝ կարելի լի անցնել ապազրից արտագրելուն: Պետք և հետապնդել, վոր արտագրությունը զիտակցարար արվի, տև պատճառով պետք և ընարել իմաստալի նյութ և այնպիս մշակել, վոր արտագրածի իմաստը հտուկանալի լինի: Պետք և ձգտել անսսխալ զրության: Սխալը պետք և կանխել անսողական և լսողական վերլուծման միջոցով:

Բացի սկզբում անհրաժեշտ մեքենալական արտադրությունից, կարելի լի կիրառել գրավոր աշխատանքների այլ ձեռք, որինակ, արտագրությանը կարելի լի միացնել ինքնուրույն աշխատանք՝ հետևալ կերպ.

ա) Արտագրում են ալբրենարանից, հենց վոր հասնում են ծանոթ բառին, փակում են զիրքը և հիշությամբ դրում.

բ) Արտագրում են գրատախտակից, արտագրության նյութը մշակելուց հետո, ծանոթ բառը ծածկում են կամ ջնջում, տեղը բաց թողնելով, վորպեսդի չմոռանան զրել ալդ բառը.

գ) Դաստառուն այնպիսի հարցեր և տալիս, վորոնց պատասխանում են ծանոթ (անցած, մշակած) բառե-

րով. կանխելով հավանական սխալները՝ դրում են պատասխանը:

Այսպիսի կիսափենուրույն աշխատանքները հետզհետեւ վերտծվում են ինքնուրույն գրավոր աշխատանքին: Դիտակից արտագրությունից մինչև ինքնուրույն գրության անցնելը կարելի է տեղ տալ հիշողությամբ զրելուն, վորի մաքուր ձևերից մեկն և թելազրությունը (տեսողական, լսողական), իհարկե, նախառես մշակելով նյութը և կանխելով հնարավոր սխալները: Ինքնուրույն գրության ունակությունների ամրացման զուգընթաց պետք ե կրճատել տեսողական վերլուծումը և ավելի տեղ տալ լսողական վերլուծմանը (լսողությամբ տարբերեն բառի առանձին մասերը, վանկերը և հնչյունները):

Ինքնուրույն գրավոր աշխատանքներից ավելի կարենու գործնական գրությունները՝ ցուցակների, դիմումների կազմելը, նամակ կամ թղթակցություն գրելը և այլն:

Գրադիտության ուսուցման մոմենտներից հատուկ ուշադրություն պետք ե դարձնել հնիյունատառի մօակաման («տառ հանելուն»): հնչյունային մշակումը տեղաբառե աշխատանք և և պահանջում ե հմտություն ու տեսական վարժություն, մինչդեռ բառային և վանկային մշակումն՝ իրեն ընդհանուր կանոն՝ կարելի է սպառել 1—2 հատուկ դասերում (սկզբի): Այս հանգամանքն ավելի կարենու դառնում, յեթենկատի ունենանք և սովորողների բացակայությունները դասերից, մինչդեռ տառի մշակման տեսվական աշխատանքների ընթացքում բացակայողը հնարավորություն կունենա վերահասու լինել տառ հանելու աշխատանքներին:

Մի շաբաթ նման վարժություններից հետո, մոտավորապես 12—13-րդ դասին, կարելի է դադարեցնել նոր հնչյունատառերի հասառուկ մշակումը և ուղղակի անցնել մշակվող տառին։ Տառհանելիս տարբեր մոտեցում ենք ունենում ձայնավորին ու բաղաձայնին։ Մինչդեռ ձայնավորն առանց գժվարության կարելի է անվանել մոտավորապես իր բնական հնչյունով, բաղաձայնը՝ առանձին արտաստնելիս՝ աղավաղվում և և կորցնում իր բնական ձայնը։ Բաղաձայնը հանելիս պետք է զուգորդել այն ձայնավորների հետ և այդ զուգորդությունը (վա, վե, վը, վի, վո, վու) համարել հնչյունատառի անունը։ Առվորողի ուշադրությունը պետք է սեենել այն հանդամանքի վրա, վոր չնալած ձայնավորների փոփոխության, մնում և մի կալուն հնչյուն—բաղաձայնը։ Այսպիսով սովորողը, առանց բաղաձայնին անուն դնելու, կկարողանա բաղաձայնի հնչյունն ու զիրը ճանաչել և բոլոր հնարավոր զուգորդություններում կարդալ։

Բաղաձայնին կարելի է անուն դնել միայն այն դեպքում, յերբ սովորողը կարողանում է այդ բաղաձայնը բոլոր զուգորդություններում լտակ կարդալ՝ առանցը-երով կապելու ձայնավորների հետ (բըանըվըըը=բանվոր)։

Նախապատրաստական աշխատանքը կատարվում է դասագրքից դուրս. այդ աշխատանքի (զըուցի) նպատակն ե՝ բացատրել սովորողներին, վոր գրել կարդալ սովորելու համար պետք և ծանոթանալ լեզվի կառուցվածքին, գտղափար տալ նրա բաղկացուցիչ մասերի՝

ասուլթների և բառերի մասին։ Այս նպատակին հասնելու համար դաստուն ոգտագործում ե զանազան միջոցներ, վերլուծում ե վորեկ խոսք, իր ասածը, վորեկ լողունգ, գրքի, լրագրի վերնագիր կամ հիմնարկի անուն և այլն։ Այդ աշխատանքի հետևանքն ե լինում այն, վոր սովորողները պատկերացնում են խոսքն ու բառը, սրանց տարրերությունը և կարողանում են տարրերել ու հաշվել առանձին բառերը, սրանց քանակը խոսքում և այլն։

Այս աշխատանքի նմուշը տրված և «Դեպի կոմունա» այբբենարանի դասերի մշակման ձեռնարկում, առաջին (ներածական) դասի սկզբում։ Նույն աշխատանքը պետք ե կատարել նաև «Բանվորի» առաջին դասի ընթացքում։ Հետագա 2 դասերում (եջ 3, 4) խոսքի մշակումը կատարվում ե գրքում բերված նյութի՝ Լենինի և սովորի բառերի վրա։ Այստեղ նպատակահարմար և սկսել 2-րդ դասից, վորն իր մեջ պարունակում ե մեկից ավելի բառեր։ Վանկի մշակումը պետք ե կատարել մինչև 3-րդ դասը, վորպեսզի հնարավոր լինի արդ (3-րդ) դասի մշակման ընթացքում անցնել տոռինչնյունի մշակման («տառ հանելուն»)։

Խոսքի մշակման համար առաջին 2 դասերը լրիվ մտքեր չեն տալիս (խոսք, նախադասություն)։ ուստի և դասատուն հարկադրված կլինի կամ ընդարձակել (բանավոր) տռաջին 2 դասերի նյութը կամ մշակելի խոսքը վերցնել 3-րդ դասից (որինակ՝ սա բանվոր ե, բանվոր սովորի և ալին), սակայն վերջիվերջո կանդ առնելով դասի մեջ պարունակվող 2 բառի վրա (սովորի, Լենինի)։ Վանկի մշակման համար պետք ե վերցնել հետևյալ բաց վանկերը՝ սո, վո, րի։ Հնչյունատառը մշա-

կելիս («սառ հանելը») առավելություն և արդում  
ձախավորներին, այս պատճառով ել սկզբում հանում  
ենք ե, ա, ո, ի, ու ձախավորները:

Բաղաձալները կարելի յե հանել թե բաց և թե փակ  
(բաղաձայնով վերջացող) վանկերից, նայած թե վոր-  
տեղ ավելի լիահնչյուն և ալդ ձայնը. վորոշ զեպքե-  
րում կարելի յե վերցնել այնպիսի որինակներ (վան-  
կեր), վորտեղ հանվող տառը գտնվում և վանկի թե  
սկզբում և թե վերջում (որինակ, և տառը (և) նին  
վանկում):

Զեռագիրն սկսվում է 4-րդ դասից (Եջ 6), հիմնվե-  
լով այդ և նախորդ դասերից դուրս բերված ա, ս, ո  
տառերի վրա: Այն վրիպումը, վոր և տառը հան-  
վում և 3-րդ դասից, սակայն տվելի ուշ՝ 7-րդ դասում  
և գործածվում (գրվում)՝ կարելի յե հեշտությամբ վե-  
րացնել մի նոր որինակով (տոա՛, ե՛ կամ սեր) 5-րդ,  
նույնիսկ 4-րդ դասում:

Դրության ուսուցման տեխնիկալից այրբենարանի  
շրջանում կարելի յե ոգագործել հետեւալ մոմենտները.

1. Արտագծում, վոր գործադրում ենք առաջին 3 դա-  
սերի ընթացքում (մինչև ձեռագրին անցնելը).

2. Ձեռագիր վարժություններ, վոր սկսվում է 4-րդ  
դասից և իր մեջ պարունակում և թե վերլուծման  
(գրելը) և թե համադրման (գրածը կարդալը) պրո-  
ցեսները:

3. Արտագրություն ձեռագրից՝ սկսած մոտավորապես  
8-րդ դասից.

4. Տպագրից գիտակցաբար արտագրելը, վոր կարելի  
յե ավելի ևս հետաձգել և սկսել այն ժամանակ միայն,  
իերը սովորողներն արդեն վարժվել են հատվող այս-

բենի գործածության և ձեռագրի ընթացքում բառերն  
ամբողջությամբ արտադրելուն:

Դրավորների մասցած ձեերի գործածությանը (գրու-  
թյուն հիշողությամբ, շարադրություն, գործնական  
գրություններ և այլն) կարելի է անցնել ընթերցարա-  
նի շրջանում:

Մեծատառերի և փոքրատառերի (ձեռագրի) գործա-  
ծությունն սկսվում և միաժամանակ (4-րդ դասից), իսկ  
տպագիրն՝ ավելի վաղ (3-րդ՝ դաս): Մը պատճառն այն  
է, վոր այս դասերում հատուկ անունների գործածու-  
թյունն անխուսափելի է չեղել և կազմողներն յեղել  
են այն տեսակետին, վոր սկզբից ևսթ սովորողին պետք  
է տալ ուղղագրության կանոնները ճշտությամբ: Այս  
հանդամանքն անշուշտ մի քիչ բարդացնում է աշխա-  
տանքը, սակայն այդ գժվարությունը մեղմանում է նրա-  
նով, վոր ձեռագիր մեծատառն այս գրքում շատ նման  
և փոքրատարին (եջ 6) և տարբերվում է վերջինից միայն  
իր մեծությամբ: Հետազայում ևս դասատուն պետք է  
աշխատի ավելի պարզել մեծատառերի ձեր, նմանեց-  
նելով փոքրատառերին, ինչպես այդ մեծ մասամբ հա-  
ջողվել է տալ վերջերս հրատարակված պատի մեծա-  
դիր այբբենում: Մաղականների գործածության դեմ  
են յեղել կազմողները, և այս սկզբունքը պահպանված  
է թե ալբբենարանում և թե ընթերցարանում: Սկզբի  
դասերին, յեթե դասատուն անհրաժեշտ է գտնում արդ,  
ձեռագիրը կարելի է գրել չմիացրած, վորով տվելի էն  
դրությանում զրածը կարդալը: Հետազա դասերում կա-  
րելի է հետեւ զրքին և գրել միացրած տառերով:

Գրության ձեը (ուղղահայաց, թեք) գրքում խառն  
և տըզած: լավ կլինի, վոր դասատուն այս խնդրում

Հետապնդի և հաշավի սովորողների ցանկության հետ  
Սակայն գերազասություն պետք է առ ուղղահայց  
դրությանը:

Մարեմատիկական վարժություններ ալբրենտական մա-  
սում չկան. սակայն թվարկությունը կարելի է անց-  
նել ալբրենտարանի շրջանում, նախ 1—10, ապա 10—  
100 տասնյակներով և վերջապես 1—100ի առան թվերով.  
Այս անհրաժեշտ է, վորովհետեւ հոգիածներում կան  
մաթեմատիկական նյութեր (եջ 19, 27 և ալլն): Նույն  
դասերում կան նաև ժամանակի, ծանրության, դրամի  
չափեր, վորոնց և պետք է ծանոթացնել առանց ման-  
րամասնությունների (ժամ, սուրլի-կողեկ, վորթ-կելո-  
և ալլն):

### ԴԱՍ № 1—2

#### (Ներածական դաս)

Դասի նպատակը

Զրուցի և շարժական ալբրենի միջոցով գաղափար  
տալ խոսքի և բառի մտսին, և կենին» և «սովորի սո-  
վորի սովորի» խոսքի մշակումը:

Դասի ծրագիրը

1. Զրուց: Գաղափար խոսքի և բառի մասին:

2. Համառոտ զրուց ալբրենտարանի նկարների շուր-  
ջը (եջ 3—4): «Սովորի սովորի սովորի» խոսքի կար-  
գալն ու արտագծումը:

3. «Սովորի—կենին» խոսքի մշակումն ուղիղ և հա-  
կադարձ դասավորությամբ:

Դասի ընթացքը (համառոտ)

Դասի ընթացքի նկատմամբ դասատուն պետք է  
նկատի ունենա հետեւյալ հանգամանքները.

Խոսքի մշակումն ու վերլուծումը (բառերի) կարելի  
յէ հիմնել դասից դուրս վերցրած նյութի վրա—լրագրի  
կամ հիմնարկության անուն, առողջական վերցրած  
վորեն նախադասություն և այլն։ Հարց ու պատասխա-  
նի և գծերի միջոցով սովորողները ըմբռնում են խոս-  
քի կառուցվածքը և կարողանում են այն բառերի վե-  
րածել։

Դասի յերկրորդ մոմենտն և զբքի առաջին յերեսնե-  
րի (3—4) խոսքի և բառերի մշակումը՝ նույն նպատա-  
կով, ինչպես նաև սրանց կարգան ու արտագծումը։

3 և 4 յերեսների միացումը մի դասում հետեւանք և  
այն բանի, վոր առաջինը (Լենին), բաղկացած լինելով  
միայն մեկ բառից, խոսքի մշակման հնարավորություն  
չի տալիս (խոսքի վերլուծումը բառերի)։ Այս պատ-  
ճառով ել նյութն ամրողացնում ենք, մշակման հա-  
մար վերցնելով—

սովորի՛, սովորի՛, սովորի՛ Լենին

Փրազան հետեւյալ դասավորությամբ—

Սովորի՛ Լենին կամ Լենին  
Սովորի՛

վորին կարելի յե տալ հետեւյալ արտմաբանական  
մեկնաբանումը՝ Սովորի՛, (ասում ե) Լենին (ը)։

Լենին (ը ասում ե)՝ սովորի՛.

Այսպիսի պարզաբանությամբ միայն բերված որի-  
նակը կարող ենք լրիվ խոսք համարել։

Այս խոսքի կամ բառերի յելակետ պետք է ընդունել

նկարների շուրջը տարվող զբուցը Պարզ է, վոր Լեռնինի մասին առիթներ շատ կտն խոսելու, ահա միքանի որինակներ.

Մեր յերկրի ինդուստրացումը. Լենինը՝ ինդուստրացման մասին.

Հոկտեմբերիան հետագա փոխություն  
Հայաստանի խորհրդայնացումը

Լենինը՝ իբրև հեղափոխության  
առաջնորդ. Լենինի գերը Հոկտեմբերիան մեջ:

Լենինը և սոցիալիստական մըցումը և ալին:

Պարզ է ինքնըստինքյան, վոր յեթե դաստառն չի ուղղում առաջին դասն ովատագործել իբրև քաղաքադիտական նյութ, այլ կապում է միայն գրել-կարդալու տեխնիկակի (ուսուցման) հետ, այդ դեպքում կարելի յի բավականանալ միայն գրքի նկարը (Լենինի) ցուց տալով և անցնել հետագա աշխատանքներին՝ զբուց 2-րդ նկարի շուրջը և այդ նկարի տակի խոսքի կամ բառերի մշակումն:

Զրուցի դեպքում լնական կերպով կարելի յի անցնել 2-րդ նկարին, հիշեցնելով, վոր Լենինի պատգամներից մեկն և «սովորի» և տվյալ նկարը (եջ 4) պատկերացնում և այդ պատգամի իրագործումը («բանվորը սովորում ե»):

Մշակման համար արված այս որինակն (թեպետ լրիվ և ձևակերպված խոսք չի արվում) ունի այն հարմարությունը, վոր շատ բնականորեն տրվում է նկարելու—արտագծելու պահանջը: Ամեն մի սովորող յերևի կցանկանա կազմել պլակատ և դպրոցում կամ տանն ունենալ՝ իր գրած-նկարած՝ Լենինի պատգամը:

Շարժական ալբրենի, թղթի շերտերի և գծագրման  
միջոցով այստեղ ևս դաստիւն հետապնդում և խոսքի  
չուրացման՝ տեսողական, լսողական և շարժողության  
զգայաբաններով ընդգրկելով թե վերլուծման և թե  
համագրման պրոցեսները:

### ԴԱՍ № 3—4

Դասի նպատակը  
Վանկի ծանոթություն.

Դասի ծրագիրը

1. Նախորդ դասի կրկնություն.
2. Համառոտ զրուց նկարի շուրջը.
3. Սա, բանվոր, ե, Առո, Լելոնին, ասա, վոր բառերի մշակումն.
4. Սա բանվոր ե խոսքի մշակումն՝ վանկերի բաժանելով։ Մշակվող խոսքի և բառերի արտագծումը.
5. Զրուց՝ վանկին ծանոթացնելու նպատակով.
6. Լելոնին ասա վոր սովորի խոսքի վանկելը և կե, վո, նին, ա, աս, վոր, սո, վո, բի վանկերի մշակումը։

---

7. Լելոնին ասա վոր սովորի խոսքի մշակումն (նախորդ կետի շարունակություն)՝ վերածելով բառերի, բառերը՝ վանկերի, վանկերից նոր բառեր կազմելով։

8. Նկարել (արտագծել) մշակած բառերը, վանկերն ու խոսքը (բառերը վանկերի վերլուծելով, վանկերից բառեր ու բառերից խոսք կազմելով):

Դասի ընթացքը (համառոտ)

Այս դասը հաշվում ենք 3—4 (միացյալ) հետեւալ

Նկատառութեաներով. յեթե մենք չմիացնելինք 1—2 դասի-  
րը, ալդ դեպքում վանկի մշակումը պետք էր կատա-  
րել 2-րդ դասի ընթացքում (եջ 4). սակայն 1—2 դա-  
սերը միացնելու դեպքում մենք ստիպված կլինենք  
վանկի մշակումը կատարել 3-րդ դասի (եջ 5) ընթաց-  
քում. և վորովհետեւ այս դասից միաժամանակ և՝ տառ-  
ենք հանելու (ն, ա), ուստի դասի մեթոդական պա-  
հանջները կրկնապատկվում են (վանկի մշակումն ե-  
տառ հանելը). Բացի ալդ, վանկի մշակումն այս դա-  
սին թողնելով, մենք ստիպված ենք միանգամից տալ  
բազմաթիվ նոր վանկեր, վոր իր հերթին դժվարաց-  
նում և աշխատանքը. Այս բոլոր նկատառութեան-  
դասը կարելի յէ 2 ետապի բաժանել, մեկում կատա-  
րել վանկի մշակումն, մյուսում՝ հնչյունատառի մշակու-  
մը (տառ հանելը):

1 Կրկնությունն այստեղ շատ ժամանակ չի պահան-  
ջում. բավական և կարդալ շարժական տառերից կազ-  
մել և գրատախտակի վրա արտագծել իբրև լողունգ:

### Սովորի սովորի սովորի լենին

և բավականանալ սրանով, մանավանդ վոր 1—2 դա-  
սերի ընթացքում արդեն մշակված և լուրացրած եւ

2. Զբուցը՝ նկարի շուրջը (եջ 5) նույնպես կրկնու-  
թյուն և դառնում, յեթե այն կապենք նախորդ (եջ 4)  
դասի հետ, վերցնելով նույն բանվորին («սովորող»)  
աշխատանքի պարմաններում: Առաջին տողն (սա բան-  
վոր ե) անմիջապես կապվում է նկարի հետ, իսկ մյուս  
տողերին կարելի յէ պայմանական իմաստ տալ. դա-  
սատուն ասում եւ, վոր այս բանվորի անունն և Ասո,

հետևապես մենք կարող ենք կարդալ ու արտազծել՝  
բանվոր Ասո.

Հետեւյալ 2 տողն ավելի ևս տրհեստական ե. ալստեղ  
դասատուն ստիպված կլինի ասել, վոր մենք դիմում  
ենք բանվոր Ասոյին և հանձնարարում ասել Լեռնին  
(մի ուրիշ բանվորի), վոր սա սովորի. ալսպիսով ստա-  
նում ենք հետեւյալ խոսքերը. —

Բանվոր Ասո

Լեռնին ասա.

կամ

Բանվոր Ասո Լեվոնին ասա  
վոր սովորի.

կամ

Լեռնին ասա  
վոր սովորի:

Ի՞արկե, զրուցի ընթացքում մենք կարող ենք շոշա-  
փել արդյունաբերության կամ բանվորի աշխատանք-  
ների հետ կտպված այլ և այլ խնդիրներ, որինակ՝ մեր  
գործարանի բանվորությունը, նրա վերն ու գրությու-  
նը, բանվորի աշխատանքը, մեր յերկրի ինդուստրա-  
ցումն ու գործարանների դերը, 7 ժամկա որ և այլն:

3. Սույն դասում բացի սովորի բառից մյուս բոլոր  
բառերը նոր են, այդ պատճառով ել կարող ե անհրա-  
ժեշտություն առաջանալ 2 նվազում մշակել այս բա-  
ռերը. որինակ, առաջին նվազին կարելի յե վերցնել  
բառերի հետեւյալ խումբը —

Սա Ասո ասա ե բառերը, յերկրորդ

նվազին մնացած բառերը —

Բանվոր Լեռնին.

ալս 6 բառերը կարելի չե խմբել նաև հետեւալ կերպ  
ա) Աս բանվոր ե, բ) Ասո Լեռնին ասա,  
բառերի մշակումը կատարել այնպես, ինչպես տրված  
ե «Դեպի կոմունա»-ի առաջին գասերի մշակման մեջ։  
4. Առանձին բառերի մշակումից հետո մենք կարող  
ենք հեշտությամբ անցնել խոսքի մշակման—

### Սա բանվոր ե.

այսուհեղ բոլոր վանկերը նոր են—սա, բան, վոր, ե.  
մենք արդեն ներածական դասում տվել ենք վանկի  
մասին գողափար, այսակեզ վանկում ենք բան-վոր բա-  
ռը, ապա վանկերից համադրելով ստանում ենք բան-  
վոր, վորից հետո նաև լրիվ՝ սա բանվոր ե։ Այս աշխա-  
տանքը վերջացնելուց հետո կարող ենք հեշտությամբ  
անցնել նույն խոսքի արտադրման վանկերը մշակե-  
լիս ու համադրելիս պետք ե զիմել դարձյալ շտրժա-  
կան տառերի և թղթի շերտերի գործադրության։ 5—6  
զրուցի միջոցով նորից անցնում ենք վանկին։ Այս-  
տեղ մենք կարող ենք վերցնել դասի առաջին մասից  
բանվոր և Ասո բառերը կամ լերկրորդ մասից ասա Լե-  
վոնին բառերը։ Դարձյալ նույն ձեռվ (տես՝ «Դեպի կո-  
մունա» № 2 դասի մշակումը) ծանոթացնում են բառի  
վերլուծման՝ վանկերին, դաղափար տալով լերկվան-  
կանի, լերկը վանկանի բառերի մասին (Ասո, ասա և  
Լե-վո-նին)։ Պետք ե հետապնդել, վոր սովորողները  
լրակ պատկերացնեն սա, ե վանկերը, վորոնցից հանե-  
լու լենք սույն դասում, ա, ե հնչյունատառերը։ Ամ-  
բողջ դասը (եջ 5) վանկերով մշակելու համար մենք  
գործ կռւնենանք հետեւալ նոր վանկերի հետ (ամբողջ  
դասի նկատմամբ)՝ Լե, վո, նին, ա, սա, վոր, սո, րի։  
Սակայն լեթե մենք դասը բաժանել ենք 2 մասի և մի

մասի վանկերն արգեն մշակել ենք, այժմ կարող ենք  
մշակել մնացած 3-5 վանկերը:

7. Աշխատանքի այս շրջանում մենք կարող ենք ամ-  
փոփիլ մշակման աշխատանքները. խոսքը վերլուծում  
ենք բառերի, բառերը վանկերի, վանկերից նոր բա-  
ռեր ենք կազմում: Եթզ կետում քերված վանկերից  
մենք կարող ենք կազմել հետևելով նոր բառերը (կամ  
կը կնել անցած բառերը՝ ծանոթ վանկերից համապրե-  
լով) —

Հենին, Նինա, ա-սո-րի, ո-վո, արի, ա-լի-  
վոր, սո-վոր, (սա-րի, ա-նին) և այլն իգեպ,  
այս խնդիրը շատ և հետաքրքրում սովորողներին և  
աշխատանքների մեջ:

8. Արտագծման աշխատանքները պարզ են. չպետք  
է մոռանալ միայն, զոր նտխքան բառն արտագծելը  
պետք է այն վերտել վանկերի, ապա՝ այդ վանկերն  
համարելով՝ ամբողջական բառ կազմել և սըանից հե-  
տո միայն բառն արտագծել ամբողջությամբ: Նույնը  
պետք է կատարել նոր ամբողջ խոսքի արտագծման  
համար: Այսպիսով մենք նախապատրաստում ենք հե-  
տագայում ուղիղ գրելու և արտագրելու (ձեռագրից)  
աշխատանքների համար:

Ինչպիս ասացինք սկզբում, այս դասն իր մեջ ընդ-  
դրկում ենան տառ հանելու (Ե, ա) խնդիրը. յեթե զա-  
սատուն չի ուզում հետաձգել այս աշխատանքը, պետք  
է վերջում անդրադառնոտ տառերը հանելուն, զոր կա-  
տարվում և ըստ «Դեպի կոմունաց-ի» № 3 դասի § 4.ի  
(ի տառի հանելը): Այս տառերն հանելու համար ան-  
հրաժեշտ է անդրադառնալ մշտկած սա, և վանկերին,

Դասի ծրագիրը (համառոտած)

1. Նախորդ դասի համառոտ կրկնություն.
2. Ալբրենարանի 6-րդ հջի նյութի կարգավը.
3. Նոր վանկերի յուրացում և ս, ո հնչյունատառերի հանելը, ծանոթություն վերջակետի (։).
4. Զեռագրի ծանոթություն—Ասո, ասա բառերի գրելը:

Դասի ընթացքը (համառոտած)

§ 3-ից. բառերի մշակման ժամանակ դասառուն կանգ և առնում նոր վանկերի վրա՝ Կա, րան, դաս, բում, ու, առանձնապես ուշադրություն դարձնելով դաս և (Ա)-սո վանկերին, վորո՞ւցից հանվելու լին ս, ո տառերը:

Անգրադառնալով նյութը կարդալուն, դասառուն ուշադրություն և հրավիրում այն հանգամանքի վրա, վոր ամեն մի նոր տողից նոր խոսք և սկսվում և ամեն մի տող կարդալիս մեր ձայնը փոխվում և ու կանգ ենք առնում (դադար): Այս գեպքերում դրվում ե վերջակետ (։): Սովորողներին ծանոթացնում ե այս նշանին:

Այնուհետև դասառուն բացատրում ե, վոր մենք մինչև այժմ բառերն ու նշանները (տառերը) նկարում ելինք, այժմ գրելու լինք: Եեվ վորովհետև § 3-ում մենք հանել ենք ս, ո հնչյունատառերը, ուստի տուանց դըժվարության անվանում ենք ալդ հնչյունները և անցնում Ասո ասա բառերի գրելուն: Բառերը կարելի լի գրել հերթով նաև մեկն, ապա մէուսը: Դասառուն գրատախտակին գրում ե Ասո բառը,—դանդաղ, խոշոր

ու պարզ տառելքով։ Սովորողները հետևում են, դասա-  
տուն բացատրում եւ տառերը գրելու լիզանակը, յուլց  
եւ տալիս սկիզբը, մասնիկների տեղն ու մեծությունը,  
տառերի դասավորությունը և այլն։ Զեռագիր տառերն  
համեմատում եւ տպագրերի հետ՝ նույն բառում, շեշ-  
տում եւ նմանությունն ու տարբերությունը (ա տարի,  
անկյունավոր և կորագիծ դարձվածքները)։ Սովորող-  
ները կարդում են գրածն, իրենք ևս համեմատում են  
տպագրի հետ, ապա գըում են տետրերում։ Գրելու  
ժամանակ դասատուն անցնում եւ սովորողների մոտ,  
ուղղում եւ, ցուցմունքներ տալիս։ Գրում են 3—4 ան-  
դամ, ապա կարդում տետրերում գրածը։ Ցեթե կա  
ձեռագիր հատվող ալբրեն, կարելի յի ոգտագործել  
նույն բառը կազմելու և կարդալու համար։

Նույն ձևով գըում և կարդում են ասա բառը, համե-  
մատում Ասո և ասա բառերը։ Տրված ձեռագրի փոխա-  
րեն դասատուն կարող եւ առաջադրել նույն տառերից  
կազմված այլ բառեր (աս, սա, սա ե, Ասո, ասա—  
աս, ասա—ե և այլն)։

### Հետազա դասերը

Առաջին 4—5 դասերում (եջ 3—6) մենք ծանոթա-  
ցանք հետևյալ գլխավոր խնդիրներին, վորոնց մի մա-  
սը պարզաբանված են «Դեպի կոմունա»-ի սկզբի  
(1—6) դասերում։

1. Ներածություն՝ խոսքի գլխավոր մասերի վերա-  
բերմամբ,

2. Խոսքի մշակումը, 3. բառի մշակումը, 4. վանկի  
մշտկումը,

5. Հնչունատառի մշակումը, 6. ձեռագրին անցնելը,  
7. կետադրության ծանոթություն, 8. անցածի կրկնու-

թիուն, զրուց, նկարի դիտազություն; շարժական տառերի գործածության լեզանակը և այլն:

Առաջիկա դասերին կարող են հանդիպել հետեւալ խնդիրները. 1) թվանշանների գրություն, 2) լեռահընչը վանկերի մշակումն, 3) տպագրից արտագրություն, 4) ժամանակի, ծանրության չափերի, ոռւբլու և կոտրեկի ծանոթություն, 5) խոսքի գրություն հիշողությամբ: Հիշյալ դեպքերը կարելի լի կապել հետեւալ դասերի հետ, վոր վերցնում ենք պատահարար՝ իրեն նմուշ:

1. Թվանշանների գրություն. Թվանշանները տրվում են անսխատեմ, բացառություն և կազմում «Արտել» դասը (եջ 9), վորտեղ ընթած են 1—5 թվանշանները (նաև № նշանը). այս թվանշանները կարելի լի ոգտագործել դասից դուրս, իբրև մաթեմատիկական վարժություն: «Համար հինգ սանկոռազ-ում տրվում են յերկանիշ թվեր (26, 35, 80), վորից ոգտվելով՝ դարձյալ դասից դուրս կարելի լի ծանոթացնել տասնյակների թվարկության. նույնը հանդիպում ենք «Ճաշարան» հոդվածում (եջ 19): Հոռվմեական թվերն ու ամիսների կրճատ գրելը չի շոշափվում դասերի ընթացքում, սակայն կարելի լի առիթներ ստեղծել, լիթե դասատուն նպատակահարմար և համարում անցնել այդ (դասերի կարգը գրելիս, ժամացույցին ծանոթացնելիս (եջ 27) և այլն):

## 2. Յեռահնչյուն վանկերի մօակուսն

Յեռահնչյուն վանկերի գործածությունն սկսվում և առաջին դասից (ԱԵ. Եին). յերկրորդ դասից սկսած արդեն մենք հաճախ ենք հանդիպում ալղութիսի վանկերի բան-վոր, բոն, դաս, ըում և այլն): Յեռահնչյուն վանկերի մշակումը չպետք և շտապեցնել, մոտավորապես կարելի լի Յ-ըդ դասից (եջ 8) սկսել նկատի ունենա-

լով այն հանդամանքը, վոր այդ դասից սկսած ձեռագրում հանդիպում ենք ինուանչչուն վանկերի (Ա. բամ, Ա. րուս): Բազմահնչյուն վանկերը մշակելիս առաջնություն տալ այն վանկերին, վորոնք՝ առանձին վերցրած՝ ունեն վորոշ իմաստ (բան-վոր, կար, դաս, Դարեղին և այլն):

### 3. Տպագրից արտագրություն

Արտագծման հետեւալ ետասին և ձեռագրից արտագրելը, վորից հետո պետք է անցնել տպագրից արտագրելուն: Առաջին անգամ տպագրից արտագրելիս ցանկալի է միաժամանակ նույնը տալ նաև ձեռագրի: Այսպիսով աշխատանք կարելի է սկսել 8-րդ դասից (եջ 10):

## Կիրան նախակ և կարդում Կիման նամակ և կարդում

Նախ պետք է արտագրել ձեռագրից (գրատախտակից), ապա նույնը տպագրից (գրքից, եջ 10):

Նման որինակներ կան նաև հետագա դասերում (եջ 15, 16, 18—փոփոխած, 19 և այլն):

### 4. Զափերի ծանօթություն

Զափերի մասին գաղափար կարելի է տալ սկզբեաց դասերից: 15-րդ լերեսում կարելի է ծանոթացնել դրամի չափերին (ոռութիւն կամ մանեթ, կոպեկ): պետք է ծանոթացնել նաև կրճատ գրութիւնն (ոռութ=ո., կոպ.=կ.): Ժամանակի չափերին կարելի է ծանոթացնել 27-րդ լերեսի հոդվածով՝ տարի, որ, ժամ, րոպե: Բարդ հաշվի դեպքեր չկան այլքենարանում, այնուհետ

վոր չափերի մանրամասն ծանոթության ու գործազը-  
րության վրա կարելի է կանգ տանել դասերում բեր-  
ված գեղղքերից դուրս, համարելով այն մաթեմատիկա-  
կան գրագիտության խնդիր, սակայն ըստ հնարավո-  
րության կապակցելով մշակվող նյութի հետո:

### 5. Խոսքի գրուբյուն՝ նիւթուրյամբ

Այս աշխատանքին կարելի է տնյանել այն ժամանակ  
միայն, իերը սովորողները կարողանում են կանոնա-  
վոր արտագրել տպագրից (բառն ամբողջությամբ,  
պահպանելով գրության հատուկ ձևերը): Գրությունն  
սկսվում է հատվածով այրենի տասերից կազմած խոս-  
քից, վոր ցուցադրում ե դասատուն գրատախտակի  
լեզրին կամ հենարանի վրա. կարդում են միասին,  
վերլուծում բառերի, ապա դասատուն ծածկում ե ալս  
բոլորը և սկսում ցուցադրել մեկ-մեկ Այսպիսով սո-  
վորողները հետպհետև դրում են տեսրերում – որինակ՝

*Վարդանը*

(Վարդանը) նկարել

(Վարդանը նկարել) և

(Վարդանը նկարել և) Եւնինիք

(Վարդանը նկարել և) Եւնինիք

*նկարը:*

Պետք են հետևել, վոր հիշողությամբ տրամադրելու դեպքում սովորողները՝ 1) չշտապեն և բառերը ցուցադրելու, ժամանակ չարտագրեն, 2) ընկերներից լետ չընկեն և 3) իրարից չարտագրեն։ Դժվարությամբ գրուներին պետք են անհատապես ոգնել, լերբեմն ողտագործելով՝ անհատական (մանր) հատվող այլընթաց։

۷۰۰ م

(b) 26)

Դասի ծրագիր

- Անցյալ դասի կը կնութեռնը (եջ 24, «Քաղաք»)։
    - Կարգալ հոդվածը՝ առանձին և խմբով։
    - Կը կնել և դրատախտակի վրա գրել հատկապես 1, 2, 3-րդ պարբերությունները։
  - Զրույց քաղխորհրդի մասին։
    - Քաղխորհրդի պարագանությունները՝ տընտեսական-արդյունաբերական, շինարարական, կենցաղակին-առողջապահական և կուլտ-կրթական ասպարեզներում։
    - Քաղխորհրդի կազմը. թնչ խովերի ներկալացուցիչներ են քաղխորհրդի անդամները. կանանց թիվը, սեկցիաները։
    - Քաղխորհրդի մոտավոր բյուջեն. մուտք-լելք. յեկամուտքի գլխավոր հոդվածները։
  - Խորքի մշակումն—«Խորենին ընթեցին բաղխորհը» անդամ։ «ի» տառի հանելը. կարդալ և գրել հետևյալ բառերը՝ Խորեն, Քաղխորհուրդ, խնդիր, նախահած, հանախ, խոսել։
  - Շարժական ալբենով կազմմակազմաքաղաքի ձեռնարկ-

ների անուններն՝ ըստ դասի—գործարան, մսուր, շուշ-  
կա, գողրոց, բանկոսալ:

5. Հոգվածի կարդալը:
6. Կարգալու ու արտադրել հոգվածի տակի ձեռագիր  
որինակը:
7. Մաթեմատիկական գրագիտություն:
8. Եքսկուրսիա դեպի քաղխորհուրդ:

Դասի բնրացքը. (ըստ «Դասի ծրագրի» § Տ-ի):

1. Քաղաքի ընդհանուր նկարագիրն ու կյանքը  
վերեիշելու և քաղխորհրդի վերաբերյալ նյութը սրա  
հետ կապելու համար պետք է կրկնել «Քաղաք» հոդ-  
վածը: Միքանի անդամ անհատապես և 1—2 անդամ  
խմբով կարդալուց հետո կրկնում են 1—3 պարբերու-  
թյունները, վորի բովանդակությունն ավելի մոտ և  
ներկա դասի նյութին: Նույն պարբերությունները  
կրճատված կարելի լե արտադրել գրատախտակից կամ  
գրքեց:

2, 3. Զբուցի ընթացքում պետք է աշխատել հալ-  
տաբերելու իրենց զիացածը, խոսք տալով սովորող-  
ներից հատկապես նրանց, վորոնք տեղյակ են քաղ-  
խորհրդի գործունելության, մանավանդ լեթե սովո-  
րողների մեջ կան քաղխորհրդի անդամներ: Մրագրում  
նշան եքսկուրսիան կարելի լե կատարել դասից առաջ՝  
իբրև հոգվածի մշակման նախապատրաստություն:  
Դասի ծրագրում եքսկուրսիան տրված ե վերջում, իբ-  
րև ավարտական հուսապ կամ ձեռք բերած տեղեկու-  
թյունների ամփոփում, յենթագրելով, վոր սովորող-  
ներն ընդհանուր առմամբ ծանոթ են քաղխորհրդին:

3. Մշակման համար վերցնել «Խորենին ընտրեցին

քաղիսորհրդի անդամ» խոսքը, վոր ունի և տառով  
բառեր (Ճ բառ). հոգվածում միայն մեկը բառ կա խով  
վերջացող («հաճախ»). այդ պատճառով ել, հակառակ  
ընդհանուր կանոնի «իս» տառը հանում ենք բառի  
սկզբից կամ միջից: Առաջին դեպքում (բառի սկզբում)  
հարմար են «Խորեն» և «Խոսում» բառերը, բառամի-  
ջում «իս» տառը կա «նախաճաշ» բառի մեջ: «Քաղ-  
իսորհուրդ, խնդիր, աշխատանք» բառերն անհարմար  
են մշակման համար՝ բաղաձայների կուտակման  
պատճառով (զիս, խնդ, շիս):

«Խորենին ընտրեցին քաղիսորհրդի անդամ» խոսքը  
վերլուծվում և բառերի, «Խորեն» բառը վերլուծվում  
և վանկերի և «խո» վանկից հանում ենք «իս» տառը  
Յենթադրելով, վոր տառ հանելու տեխնիկան արդին  
ծանոթ և սովորողներին, կարիք չկա ձգձելու և նույն  
նպատակով վերցնելու տարրեր բառեր: Մշակած բա-  
ռը կամ նույնիսկ ամբողջ խոսքը գրվում և գրատախ-  
տակի վրա կամ կազմվում և շարժական այբբենով,  
վորից հետո սովորողները, լավ դիտելով, իրենք ևս  
գրում են տետրերում: Դրության ժամանակ ծանոթա-  
նում են «իս» տառի գծագրման:

Ցեթե դաստիւն անհրաժեշտ և տեղին և համա-  
րում, կարելի յե շարունակել «իս» տառով վարժու-  
թյուններ՝ ա) կարդալ, կազմել ու դրել նույն դասից  
խով գրվող բառեր, բ) ասել բառեր, վորոնց մեջ «իս»  
տառը լինի բառի սկզբում, միջում ու վերջում,  
գ) ընտրել խով գրվող այնպիսի նոր բառեր, վորոնց  
բոլոր տառերը ծանոթ («հանած») լինեն (որինակ՝  
խաղ, խանութ, սեխ, կախան և այլն), դ) մշակնել «իս»  
տառով վանկերը նույն դասից՝ խոր, խո, խըն, խա,

հ) այս վանկերից նոր բառեր կազմել, որինակ՝ խաղող, մա-խոր-կա, խա-նութ և ալին:

4. Քաղաքի ձեռնարկների ցանկը կազմելու նպատակն եւ ա) դյուրացնել հոգվածի միքանի բառերի կարգալը, բ) նոր բառերի գրության նախաղարաստություն, գ) աշխատանքների բազմազանություն, դ) գործնական միջոց՝ ձեռնարկների ցուցակ կազմելու:

Այսուեղ կարելի լի գուրս գալ հոգվածի սահմաններից և ավելի լրիվ ցուցակ կազմելու համար ավելացնել միքանի այնպիսի հիմնարկների անուններ, վրոնց գրությունը հնարավոր ե («հանած» տառերից), որինակ՝ լիթե քաղաքում կա—կարելի լի ցուցակին ավելացնել ակումբ, տպարան, կինո և ալին, Հնարավոր դեպում կարելի լի ավելացնել նաև հասցենները և այդ ցուցակը կախել դասարանում, տեղեկատու բիուրում և ալին:

Ավելի հետաքրքրվողներին կարելի լի խորհուրդ տալ և ոգնել՝ կազմելու քաղաքի հիմնարկների հատակագիծը:

5. Հոգվածը կարելի լի կարդալ սկզբում ամբողջը միանգամից տռանց գրքերի (միայն դասատուն և կարգում, դասարանը լուրմ ե): Յերկրորդ անգամ կարդում ե դասատուն, ծանը, պարզ, արաւակալուիչ. սովորողները հետեւում են գրքերով, ցուց են տալիս կարդացածը մատով կամ մատիտով:

Անուհետե կամ ամբողջ հոգվածը կօրոշ պարբերություններ կազմում են շարժական ալբերենի տառերից, նույն պարբերությունները կարդում են գրքից. այսպիսով սկսվում ե անհատական ընթերցա-

նութիւնը։ Դժվարության դեպքում դասատուն նորից կարդում և պարբերությունները կամ վորոշ հատվածներ, սովորողները կը կնում են՝ ցուց տալով կարդացվող տողերը։ Մյուսները հետեւում են։ Յեթե մեծամասնութիւնը դժվարանում է կարդալ վորեան խոսք կամ բռու, դասատուն ոգնում ե, Հարկ լեզած դեպքում այդ բառերը մշակում են շարժական տառերով։

Յեթե դասատուն անհրաժեշտ է համարում (ինկատի ունենալով հոդվածի մեծությունը, դժվար բառեւները, կարդալու տեխնիկայի թուլութիւնը և այլն), վերջում կարող ե մի անգամ ևս կարդալ, իսկ յեթե ընդհակառակը՝ կարդալու տեխնիկան (դասարանի) ուժեղ ե, կարող ե փորձել խմբտկան ընթերցանություն՝ իր ոգնությամբ և ղեկավարությամբ։ Խմբական ընթերցանությունից առաջ լավ կլինի առարկայական և տրամաբանական վերլուծում կատարել հարցերի ձևով (դժվար բառերի մտքերի կապակցության և այլն)։

6. Դասի շարունակությունն ե գրավոր աշխատանքը, վոր դժվարության դեպքում (յեթե հոգնել են կամ դասը վերջացնել ե) կարելի յե թողնել հաջորդ դասին։ Գրության համար կարելի յե վերցնել՝ ա) հոգվածի տակի ձեռագրի արտագրություն, բ) դասի վորեան հատվածի արտագրություն տպագրից, գ) 2—3 տողի տեսողական թելազրություն, դ) դասատուի հարցի գրավոր պատասխան՝ ըստ գրքի տեքստի (որինակ՝ հարց.—մվ ե Խորենը. պատասխան.—Խորենը մեր գործարանի լավ աշխատողներից մեկն ե) և այլն, Համապատասխան աշխատանքների ընթացքում (գրավոր) ինկատի ունենալ հետևյալը. ա) վերլուծել և կազմել բաղխորուրդ, անվատանեների և դասի վորեան

հատվածում պատահած գժվար բառերը, ք) տեսողական թելադրության ժամանակ նույն ձևով նախապատճել արտադրելիք նլութը, գժվարության գեղջում ոգնելով սովորողներին. տեսողական թելադրության ժամանակ ոգտվել կամ գրքից կամ զատառուի ձեռագրից (գրատախտակի վրա), դ) հարցերի գրավոր պատասխանի համար ոգտագործել գիրքը, վերածելով այդ աշխատանքը արտադրության՝ տպագրից:

7. Մաթեմատիկական գրագիտության նլութը հոգվածի հետ կապակցելը մնում և դասաւուի հայեցովության: Հոգվածն այս գրությամբ առիթ և տալիս միայն թվարկության՝ 1—5 (քանակական կամ զատական—ըստ հոգվածում բերված 5 կետերի): Նման աշխատանք և նաև վերոհիշյալ ցուցակը կազմելը, ցուցարդաքարտի սարք գաղաքի:

Կարելի լի մտածել ավելի բարդ հաշիվ զրուցի նլութի շուրջը, ոգտվելով քաղիմորհրդի բարձելի տվյալներից: Այստեղ առիթներ կան հետեւալ հաշիվները կատարելու:—

Յերկնիշ թվերի գործածություն՝ գրավոր և համրիչի վրա. գումարում և հանում:

Յեռանիշ թվերի գործածություն՝ գրավոր և բանավոր:

Կլորացրած հաշիվ՝ հարյուրավորներով և հապարտվորներով:

Զափերի կրկնություն, բարդ անվանական թվերով գործադություններ (ոռւբի—կոպեկ, մետր—սանտիմետր, ար—հեկտար, կիլոգրամ—տոնն և այլն):

Քաղիմորհրդի բարձելի հոգվածների և չելեմուտքի:

քննությունը լայն հնարավորություն և տալիս իւշնոցիրներ կազմելու Որինակ՝ մի դպրոցի պահպանումը, առողջապահական գծով կատարվող ծախսերի քանակը, քաղաքային տուրքերի, յեկամուտների գումարը և այլն:

Հողվածի կետերը (1, 3, 4, 5) նույնպես նյութ ևն տալիս մաթեմատիկական առաջադրությունների, որինակ՝ ինչքան ծախս և պահանջվում վորեւ դպրոցում նախաճաշի կտղմակերպումը, բանվորական մի նոր շենքի կառուցման ծախսերն ու յեկամուտը և այլն:

8. Ինչպես սկզբում ասացինք՝ եքսկուրսիան կարելի յե կատարել նախքան հոդվածի մշակելը, վոր հնարավորություն կտա ավելի գիտակցարար մունիսալու հոդվածում շոշափած խնդիրներին։ Այս դեպքում զրուցի առատ նյութ կունենա դասարանը և հոդվածը կընդգրկի եքսկուրսիայի ընթացքում պարզված խնդիրների միայն մի մասը։ Եքսկուրսիան պետք և նախապատրաստել. կազմել եքսկուրսիայի ծրագիր՝ ըստ հնարավորության՝ սովորողների հետ։ Այնուևեա պետք և նախազգուշացնել քաղխորհողի համապատասխան բաժնին կամ աշխատակցին, վորապեսդի բավարարեն եքսկուրսիայի պահանջները, պատրաստեն պահանջվող տվյալները և այլն։

Եքսկուրսիան հոդվածի մշակումից հետո կատարելու դեպքում ել պետք և նույն աշխատանքները (ծրագրի կազմելը, կապ քաղխորհողի հետ) կատարել, սակայն այս դեպքում եքսկուրսիայի ծրագիրն ավելի սահմանափակվում և և բղխելու յե գլխավորապես հոդվածում շոշափած կետերից։

Յերկու գեղագում և լ ցանկալի կլինի ալյուլել (ամ-  
բողջ դասարանով) քաղխորհրդի պլենումի կամ սեկ-  
ցիաներից մեկի նիստը, վորի որակարդն ավելի մատ-  
չելի ու հետաքրքրական կլինի:

«Քաղխորհուրդ» հոդվածի (և եքսկուրսիայի հետ  
կտպված խնդիրների) մշակումը կարող և տեսական  
բնույթ կրել: Ցենթազրենք, վոր դասարանն ամբող-  
ջությամբ կամ մի խումբ սովորողներ կամ վերջապես  
քաղխորհրդի կամ սեկցիաների անդամներ (սովորող-  
ներից) ցանկանում են ավելի մանրամասն մշակել  
վորեն խնդիր (կոմունալ ձեռնարկություններ, բլու-  
ջեն, դպրոցների ցանցը, մտուրը և այլն). իսկ սրա  
համար անհրաժեշտ և, վոր նրանք դարձլու կապ  
պահպանեն քաղխորհրդի հետ, այս կոմ այն հիմնարկն  
ալյուլեն, վորեն խնդրով դիմեն դասատուին, դիմ-  
քրամներ ու ցուցակներ կազմեն և այլն: Այս հան-  
գամանքը չպետք է խանգարի դասարանի հետադա-  
աշխատանքներին, վորոնց զուգընթաց, արտադասա-  
րանական ժամանակն կամ դասամիջոցներին դասատուն  
կարող է զբաղվել ալյուլիսիների հետ: Հակառակ դեպ-  
քում (լեթե տարվեն վորեն դասով) կարող են առւժել  
ընդհանուր աշխատանքները և խմբի աշխատանքները  
յետ կընկնեն ծրագրի պահանջներից:



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0044647

[106]

Գիրք 10 կոպ. (Մ.) 1<sup>1</sup>/<sub>4</sub> մ.

A  $\frac{1}{800}$



---

М. Дургарян  
РУКОВОДСТВО ДЛЯ ЗАНИМАЮЩИХСЯ  
БУКВАРЕМ „БАНВОР“

Госиздат ССР Армении  
Эривань, 1930 г.

---